# ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

**Ֆիոլետովո համայնքի ավագանու արտահերթ նիստի և համայնքային նշանակության միջոցառումների (ՏԻՄ-երի ասուլիսների, հանրային քննարկումների և այլ) վերաբերյալ**

| Համայնքը | Միջոցառման անվանումը | Օրը | Ժամը | Անցկացման վայրը |
|---|---|---|---|---|
| **Ֆիոլետովո** | Ավագանու արտահերթ նիստ | 31.06.2021թ. | 12:30 | **Ֆիոլետովոյի** ավագանու նիստերի դահլիճ (գ.Ֆիոլետովո 1 փ.146) |

# Օ Ր Ա Կ Ա Ր Գ

2021թ. Մայիսի 31-ին՝ ժամը 12.30-ին Ֆիոլետովոյի ավագանու նիստերի դահլիճում կայանալիք համայնքի ավագանու արտահերթ նիստի

**ժամը՝ 12.30**

1. Ֆիոլետովո համայնքի ավագանու 2021թ մայիսի 31-ի նիստի օրակարգը հաստատելու համար

զեկ. Ա.Աբրահամյան

2. Տեղական տուրքերի վճարների գծով արտոնություն սահմանելու մասին

3. զեկ. Ա.Աբրահամյան

4. Ֆիոլետովո համայնքի բնակիչների դրամական օգնություն տալու մասին

զեկ.Վ.Նովիկովա

**ՆԱԽԱԳԻԾ 08**

---

ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2021Թ-Ի ՄԱՅԻՍԻ 31-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

/Զեկ. *ԱՐԱՐԱՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ*

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի դրույթներով՝

Հաստատել Ֆիոլետովո համայնքի ավագանու 2021թ-ի մայիսի 31-ի նիստի օրակարգը.

ՕՐԱԿԱՐԳ

1. Ֆիոլետովո համայնքի ավագանու 2021թ. մայիսի 31-ի նիստի օրակարգը հաստատելու մասին
2. Տեղական տուրքերի վճարների գծով արտոնությունսահմանելու մասին:
3. Համայնքի բնակիչներին դրամական օգնություն տալու մասին.

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱԼԵՔՍԵՅ ՆՈՎԻԿՈՎ**

*ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ*
ԱՐԱՐԱՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ 09

ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ
ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

/Զեկ. *ԵՎԴՈԿԻԱ ՍՈՒԿՈՎԻՑԻՆԱ*

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման,հաշմանդամների,կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները՝

Ֆիոլետովո համայնքի ավագանին որոշում է.

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի.
2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում հատկացված գումարները տրամադրել բնակիչներին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱԼԵՔՍԵՅ ՆՈՎԻԿՈՎ**

*ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ*
ԵՎԴՈԿԻԱ ՍՈՒԿՈՎԻՑԻՆԱ

ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ
ՏՈՒՐՔԵՐԻ ՎՃԱՐՆԵՐԻ ԳԾՈՎ
ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. *ԱԼԵՔՍԵՅ ՆՈՎԻԿՈՎ*

Հիմք ընդունելով <Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ> պետական հիմնարկի 14.05.2021թ. թիվ 1-08.127.Ն/140-21 դիմումը

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով Ֆիոլետովո համայնքի ավագանին որոշում է.

Կիրառել տեղական տուրքերի վճարների գծով արտոնություն՝ ազատելով <Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքներին հարակից էկոհամակարգերի և համայնքների հարմարվողականության կարողությունների ամրապնդում> դրամաշնորհային ծրագրի շրջանակներում Ֆիոլետովո համայնքում իրականացվելիք դաշտամիջյան ճանապարհների վերանորոգման, արոտավայրերում ջրարբիացման կետերի և չտաքացվող ջերմատների կառուցման շինարարական աշխատանքների համար:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱԼԵՔՍԵՅ ՆՈՎԻԿՈՎ**

*ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ*
ԱԼԵՔՍԵՅ ՆՈՎԻԿՈՎ